

**1.4.2. Բնակչության դրամական եկամուտներ և ծախսեր, աշխատավարձ և այլ եկամուտներ**

**Բնակչության դրամական եկամուտների և ծախսերի հաշվեկշիռը:** Բնակչության դրամական եկամուտները 2001թ. հունվար-ապրիլին կազմել են 186707.3 մլն.դրամ և 2000թ. նույն ժամանակաշրջանի համեմատ ավելացել են 12.8%-ով: Դրամական ծախսերը նույն ժամանակաշրջանում կազմել են 195968.1 մլն.դրամ և ավելացել 13.7%-ով:

Բնակչության դրամական եկամուտների ընդհանուր ծավալից 2001թ. հունվար-ապրիլին ապրանքների գնման և ծառայությունների վճարման համար բնակչությունը ծախսել է 162044.4 մլն.դրամ (86.8%), պարտադիր վճարումների և կամավոր մուծումների վճարման համար՝ 8472.4 մլն.դրամ (4.5 %), ավանդների և արժեթղթերի ձևով խնայողությունների հավելաճը կազմել է 10955.9 մլն.դրամ (5.9 %):

Դրամական եկամուտների օգտագործման կառուցվածքում 2001թ. հունվար-ապրիլին 2000թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ սպառողական ծախսերի տեսակարար կշիռը չի փոփոխվել, իսկ ավանդների և արժեթղթերի ձևով խնայողությունների հավելաճի տեսակարար կշիռն աճել է 1.7 տոկոսային կետով:

**Բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտները:** Բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտները (եկամուտները հանած պարտադիր վճարումները, հաշվի առած ապրանքների և ծառայությունների սպառողական գների ինդեքսների փոփոխությունները) 2001թ. հունվար-ապրիլին 2000թ. հունվար-ապրիլի նկատմամբ աճել են 10.2 %-ով:

**Աշխատանքի վարձատրություն:** 2001թ. հունվար-ապրիլին, ըստ յուրաքանչյուր ամիս վիճակագրական հաշվետվությունն ներկայացնող մոտ 9000 սուբյեկտների հաշվետվությունների նախնական տվյալների գնահատման, զբաղվածների միջին անվանական աշխատավարձը կազմել է 21978 դրամ և 2000թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավելացել 12.4 %: Ընդ որում, բյուջետային կազմակերպություններում զբաղվածների աշխատավարձը, որի գնահատումը կատարվել է մոտ 4000 բյուջետային կազմակերպություններից ստացվող եռամսյակային հաշվետվությունների օպերատիվ տվյալների հիման վրա կազմել է 14058 դրամ և 2000թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավելացել 11.5 %, իսկ ոչ բյուջետային կազմակերպություններում զբաղվածներինը համապատասխանաբար 28486 դրամ և 14.3 %:

**Անվանական միջին աշխատավարձի փոփոխությունը նախորդ տարվա նկատմամբ և տատանումն ըստ տնտեսության ճյուղերի, 2001թ. մարտին**

|                          | Անվանական միջին աշխատավարձը, դրամ |              | Տոկոսներով ընդամենի նկատմամբ |              | Տոկոսներով նախորդ տարվա նկատմամբ |              |
|--------------------------|-----------------------------------|--------------|------------------------------|--------------|----------------------------------|--------------|
|                          | մարտ                              | հունվար-մարտ | մարտ                         | հունվար-մարտ | մարտ                             | հունվար-մարտ |
| <b>Ընդամենը</b>          | <b>22247</b>                      | <b>21872</b> | <b>100</b>                   | <b>100</b>   | <b>113.0</b>                     | <b>112.3</b> |
| Արդյունաբերություն       | 34085                             | 32141        | 153.2                        | 147.0        | 122.4                            | 118.4        |
| Գյուղատնտեսություն       | 20581                             | 17298        | 92.5                         | 79.1         | 107.6                            | 112.4        |
| Անտառտնտեսություն        | 11777                             | 11501        | 52.9                         | 52.6         | 115.7                            | 116.3        |
| Տրանսպորտ                | 34372                             | 33366        | 154.5                        | 152.6        | 100.8                            | 98.0         |
| Կապ                      | 44157                             | 42247        | 198.5                        | 193.2        | 111.9                            | 104.1        |
| Շինարարություն           | 37969                             | 38797        | 170.7                        | 177.4        | 109.7                            | 110.3        |
| Առևտուր, հանրային սնունդ | 10042                             | 9874         | 45.1                         | 45.1         | 130.1                            | 135.6        |

## 1.ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

|   | Անվանական միջին աշխատավարձը, դրամ |              | Տոկոսներով ընդամենի նկատմամբ |              | Տոկոսներով նախորդ տարվա նկատմամբ |              |
|---|-----------------------------------|--------------|------------------------------|--------------|----------------------------------|--------------|
|   | մարտ                              | հունվար-մարտ | մարտ                         | հունվար-մարտ | մարտ                             | հունվար-մարտ |
| Բնակարանային-կոմունալ տնտեսություն, կենցաղսպասարկում      | 27758                             | 25664        | 124.8                        | 117.3        | 119.6                            | 118.7        |
| Հաշվողական տեղեկատվական սպասարկում                        | 21694                             | 19192        | 97.5                         | 87.7         | 125.5                            | 114.9        |
| Առողջապահություն, ֆիզկուլտուրա և սոցիալական ապահովություն | 13109                             | 13392        | 58.9                         | 61.2         | 104.7                            | 106.3        |
| Կրթություն  | 12307                             | 12669        | 55.3                         | 57.9         | 117.8                            | 122.0        |
| Մշակույթ  | 9552                              | 9905         | 42.9                         | 45.3         | 100.1                            | 103.4        |
| Արվեստ  | 11952                             | 10965        | 53.7                         | 50.1         | 114.3                            | 106.3        |
| Գիտություն և գիտական սպասարկում                           | 17508                             | 17985        | 78.7                         | 82.2         | 114.5                            | 116.3        |
| Վարկավորում և ապահովագրություն                            | 74772                             | 70896        | 336.1                        | 324.1        | 117.6                            | 118.0        |
| Կառավարման ապարատ   | 31410                             | 32506        | 141.2                        | 148.6        | 100.7                            | 108.4        |
| Այլ   | 25691                             | 24089        | 115.5                        | 110.1        | 111.7                            | 106.3        |

2001թ. մարտին սոցիալական ոլորտի ճյուղերում զբաղվածների անվանական միջին աշխատավարձը տատանվել է ընդհանուր միջինի 42.9 (մշակույթ) 58.9 (առողջապահություն և սոցիալական ապահովություն) տոկոսի սահմաններում: Անվանական միջին աշխատավարձն զգալիորեն բարձր է հատկապես վարկավորման համակարգում՝ ընդհանուր միջինը գերազանցել է 3.4 անգամ, կապի համակարգում՝ 2.0, շինարարության մեջ՝ 1.7, տրանսպորտում՝ և արդյունաբերության մեջ՝ 1.5 անգամ, կառավարման համակարգում՝ 1.4, բնակարանային-կոմունալ տնտեսության և կենցաղսպասարկման ոլորտում և այլ ճյուղերում՝ 1.2 անգամ: